Կամսար Ավետիսյան

ՀԱՅՐԵՆԱԳԻՏԱԿԱՆ ԷՏՅՈՒԴՆԵՐ

ՏԱՐՈՆԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ [1]

Ամեն ինչ իմացվում է համեմատությամբ, և որպեսզի ճշգրիտ գնահատենք ներկան, անհրաժեշտ է գիտենալ անցյալը...:
Մ. ԳՈՐԿԻ

Տարոնը եղել է պատմական Տուրուբերան նահանգի գլխավոր գավառը և կենտրոնական դիրք ուներ: Այս պատճառով էլ Տուրուբերանը հայտնի է եղել «Տարոնի աշխարհ» անունով:
Տարոնի կենտրոնը Մուշ քաղաքն է, որը մեր բանահյուսության օրրաններից մեկն է եղել:
Տարոնը գտնվելով Տուրուբերանի կենտրոնական մասում, շրջապատված է Սասուն, Սալնո ձոր, Բզնունիք, Հարք, Ապահունիք, Հաշտեանք, Ասպակունիք գավառներով:
Տարոնը հայտնի է պատմական վայրերով: Առաջին քրիստոնեական աղոթատունը Հայաստանում կառուցվել է Տարոնում: Հարց է ծագում իսկ ինչո՞ւ Տարոնում և ոչ մի այլ տեղում: Պատճառը այն է, որ այստեղ է գտնվել մեր նշանավոր դիցանվեր ավանը՝ Աշտիշատը կամ Հաշտիշատը:
Աշտիշատ կամ Հաշտիշատ անվան ստուգաբանությունը կապված է «հաշտ» և «շատ» բառերի միացումից: Հաշտ բառը հին հայերենում նշանակել է «զոհ» կամ «մատաղ», իսկ «շատ» բառը գործածվել է «վայրի» կամ «տեղի» իմաստով: Այսպիսով, Աշտիշատ նշանակում է «զոհավայր» կամ «մատաղավայր»: Տեղացիների կողմից կոչվել է «Հաշտից տեղիք»: Աշտիշատում կային շատ բագիններ և աստվածներին նվիրված արձաններ: Աշտիշատում էր գտնվում Վահագնին նվիրված մեհյանը, որը կոչվում էր Վահեվահյան մեհյան: Այստեղ էին գտնվում նաև Անահիտ և Աստղիկ դիցուհիների և շատ ուրիշ աստվածների մեհյանները:

---

[1] *Ավետիսյան Կ.Մ., Հայրենագիտական էտյուդներ: «Սովետական գրող» հրատարակչություն, Երևան, 1979, գլուխ 18:*

Քրիստոնեական կրոնը Հայաստանում պետական կրոն ընդունվելուց հետո, Աշտիշատի հեթանոսական տաճարներին, բագիններին և արձաններին փոխարինեցին քրիստոնեական տաճարները: Գրիգոր Լուսավորիչը կործանեց Անահիտի և Աստղիկի մեհյանները և նրանց տեղը հիմնեց Հայաստանի առաջին մայր եկեղեցին, որը կոչվել է Աշխարհամատրան տաճար կամ Աշտիշատի վանք, որը կործանվեց Լենկթեմուրի կողմից:
Աշտիշատում էին գտնվում նաև Դեմետր և Գիսանե կոչվող կուռքերը, որոնց սպասարկում էին քուրմերը: Լուսավորիչը հողին հավասարեցրեց նաև այս կուռքերը:
Հայաստանում հեթանոսական տաճարների հիմքերի վրա կառուցվում էին քրիստոնեական եկեղեցիներ: Այդպիսին է օրինակ ս. Էջմիածնի Մայր տաճարը, որը կառուցվել է 303 թվականին, այնտեղ, որտեղ գտնվում էր Սանդարամետի գետնափոր մեհյանը: Այդ մասին են վկայում 1958 թվականի պեղումների ժամանակ Ավագ սեղանի տակից հայտնաբերված կրակարանը, հեթանոսական տաճարի հիմքերը և զանազան այլ մնացորդներ ու բեկորներ:
Քրիստոնեությունը մուտք գործելուց հետո, հետագա դարերում ամենուրեք կառուցված են վանքեր, եկեղեցիներ և մատուռներ: Հատկապես միջին դարերում վանքերի և եկեղեցիների թիվը աճում է թե Արևելյան, և թե Արևմտյան Հայաստանում:
1915 թվականի ապրիլյան եղեռնից հետո օսմանյան Թուրքիան հայաթափ արեց Արևմտյան Հայաստանի շեն ու հայաշատ նահանգները: Թշնամին քանդեց ոչ միայն հայի տունն ու օջախը, այլև նրա երգն ու զրույցը: Կորան բազմաթիվ ձեռագիր մատյաններ, ինչպես նաև կործանվեցին անկրկնելի տաճարներ և կոթողներ: Թուրք ջարդարարները չհագեցան հայ ժողովրդին կոտորելով, նրանք ոչնչացրին այն ամենը, ինչ-որ վկայում էր հայ ժողովրդի գոյության մասին և որոնք իրենց վրա կրում էին Մեսրոպյան տառերը: Օսմանյան թուրքերը շատ լավ էին հասկանում, որ պետք է ոչնչացնել հայ ժողովրդի կուլտուրայի հուշարձանները՝ նրա ստեղծագործող տաղանդի ոգին:
Իհարկե, այն ինչի մասին մենք պատմելու ենք, նյութի փոքր մասն է: Միաժամանակ փոքր մասն է պատմական Հայաստանի: Բայց և այնպես դա Հայաստան է և հայրենիքն է հայ ժողովրդի:
Նյութական մշակույթի հուշարձանները հանդես են գալիս վանքերի, տաճարների, ամրոցների և այլ ձևով: Նրանք կապվում են պատմական դեպքերի և դեմքերի հետ: Այստեղ են պահվել հին ձեռագրեր, այդտեղ էին բնակվում գիտնական միաբաններ, որոնք «Մի նշխարով, մի կում ջրով և ճգնությամբ գիշերն անքուն» գրում էին մագաղաթի վրա ոչ միայն

աստվածաբանական երկեր, այլև պատմական ու բանասիրական գործեր:
Պատմական Հայաստանում Տարոնը և Արարատյան աշխարհը, որպես մշակութային վայրեր, կարևոր տեղ են գրավել և հայ մտքի զարգացման օջախներն են եղել:
Արարատյան դաշտը ունեցավ իր մտավոր կենտրոնը՝ Էջմիածնի վանքը, իսկ Տարոնում ծաղկեց սուրբ Կարապետի հռչակավոր վանքը, որը մեծ ժողովրդականություն էր վայելում: Ընդհանրապես Տարոնի աշխարհի ազգային և հոգևոր կյանքի կենտրոնը սուրբ Կարապետի վանքն էր:
Տարոնում նշանավոր էր նաև Առաքելոց կամ սուրբ Ղազարու վանքը, որը նույնպես ունեցել է իր փայլուն անցյալը:
Երբ Տարոնը 1915 թվականի եղեռնապատումի ընթացքում հրոն ճարակ դարձավ՝ ամայացան թե սուրբ Կարապետի և թե Առաքելոց վանքերը, նրանք ունեցան տխուր ու դժբախտ ճակատագիր: Նման ճակատագրի արժանացան նաև Մուշի դաշտի մյուս վանքերը՝ Արքավանքը, սուրբ Արիստակեսի վանքը, Գասպարի վանքը, սուրբ Գևորգի վանքերը, սուրբ Հովհաննեսի վանքը, Բերդակ գյուղի սուրբ Կարապետի վանքը, ինչպես նաև Մատռավանքը, սուրբ Մեսրոպի վանքը և մի քանի այլ վանքեր:
Ծանոթանանք առավել նշանավոր և առավել ժողովրդականություն վայելող սուրբ Կարապետի և Առաքելոց վանքերին, որոնց նկարագրությունը կտանք նկատի ունենալով նրանց կանգուն վիճակը, մինչև 1915 թվականի եղեռնը:

Ս. ԿԱՐԱՊԵՏԻ ՎԱՆՔԸ

Ս. Կարապետի վանքը գտնվում է Մուշ քաղաքից դեպի հյուսիս-արևմուտք, Քարքե կոչվող լեռան լանջին: Նա ամենագեղեցիկն ու ամենաընդարձակն է եղել գավառական վանքերից:
Ս. Կարապետը միայն մի եկեղեցի կամ տաճար չէ, այլ մի քանի տաճարների ամբողջություն, որոնք կազմում են սրբավայրերի, մի խումբ:
Վանքը կառուցվել է 4-րդ դարում: Ըստ ավանդության հիմնել է Գրիգոր Լուսավորիչը և նրա մահից հետո նրա մարմինը ամփոփվել է սուրբ Կարապետ կոչված մատուռի տակ:
Ս. Կարապետի վանքից դեպի Մուշի դաշտը բացվում է մի գեղեցիկ տեսարան, հեռվում երևում են դաշտի եզրում ընկած լեռները և Տավրոսի շղթան: «Բնության ամենից զմայլելի, ամենից սիրուն մի կետն է սուրբ Կարապետ վանքը, կարծես հակինթ լինի վայելչանիստ տափու վրա բնական ակնակապիճի մեջ»:
Ս. Կարապետի վանքը Արևմտյան Հայաստանում համարվում էր ամենամեծ ու ամենանվիրական սրբավայրը: Նա ոչ միայն Տարոն աշխարհի ամենանշանավոր վանքն էր, այլև ամբողջ հայությանը

ծանոթ մեծագույն մենաստանը ս. Էջմիածնից հետո: Նրա համբավն ու հռչակը դուրս էր եկել ազգային սահմաններից և դարձել նաև սրբավայր տեղացի և օտար ազգերի համար: Բացի այդ, մեր մատենագիրների մոտ կան հիշատակություններ, որ օտարազգի քրիստոնյաներ շատ հաճախ են ուխտի եկել ս. Կարապետի վանքը:

Ինչպես Մուշի մյուս վանքերը, նույնպես և ս. Կարապետի վանքը հայտնի է եղել մի քանի անուններով: Համանուն շատ եկեղեցիներից տարբերելու համար նրան անվանել են Մշո կամ Մուշի ս. Կարապետ, նաև Մուրատտու կամ Մուրատատուր ս. Կարապետ, ինչպես նաև Մշո Սուլթան ս. Կարապետ: Նա կոչվել է նաև Ինևակնյա վանք, վանքի մոտակայքում իրար մոտ բխող ինը սառնորակ, աղբյուրների պատճառով: Կոչվել է նաև Գլակա վանք՝ իր առաջին վանահոր Զենոբ Գլակի անանով, որը ասորի եպիսկոպոս էր և տեղի վանահայրը: Նա է մեզ հասցրել տեղեկություններ վանքի հիմնադրման և սկզբնական շրջանի պատմության մասին:

Մի այլ ստուգաբանություն ասում է նաև, որ Գլակա է կոչվել, ոչ թե Զենոբ Գլակի անունից, այլ վանքի մոտ գանվող միաձայն գլգլան ջրվեժների պատճառով:

Ս. Կարապետի ավագ տաճարը կառուցվել է սրբատաշ քարերից, մեծ մասամբ գորշ գույնի: Առաստաղը հյուսված է մանր ու բազմաթիվ կամարներից, իսկ ներքևից տասնվեց մեծ և կլոր սյուներ՝ միակտոր ու միջակ մեծությամբ, պահում են առաստաղը: Ունեցել է հինգ մատուռներ և տասը խորաններ: Զանգակատունը եղել է շատ շքեղ և մեծ, կախված են եղել չորս մեծ զանգակներ, որոնց ղողանջները լսվում էին Մուշի դաշտի հեռավոր վայրերում:

Արտաքին դռնից մտնում ենք գավիթ, որը ներսից և դրսից նույնպես պատած է սրբատաշ քարերով: Այն, համեմատած եկեղեցու ընդարձակության հետ, շատ փոքր է, որովհետև գավիթը նախատեսված է որպես պատվանդան հոյակապ զանգակատան համար: Գավթի պատերը և ներսից, և դրսից ծածկված են հին ժամանակների գրություններով ու արձանագրություններով:

Երկրորդ դռնով, մի աստիճան ցած իջնելով, մտնում ենք տաճար, ուր տպավորությունը շատ ազդեցիկ է: Տաճարը կամ ժամատունը բարձրանում է հին վկայարանի վրա, որտեղ, ըստ ավանդության, Գրիգոր Լուսավորիչը ամփոփել է ս. Կարապետի և Աթանագինե եպիսկոպոսի նշխարները: Ավագ խորանը ս. Խաչի անունով է: Դեպի աջ բացվում է ս. Ստեփաննոսի մատուռի դուռը, որի երկու կողմերին փոքրիկ խորաններ կան, գեղեցիկ կամարներով՝ նվիրված Պետրոս և Պողոս առաքյալներին:

Իսկ Պետրոս Առաքյալին նվիրված խորանի մոտ, Ստեփաննոսի մատուռին կից, մի ուրիշ խորան էլ կա նվիրված՝ Հակոբոս Տեառն եղբորը:
Ավագ խորանի ձախ կողմում ս. Կարապետի մատուռն է, որի դռան մոտ մատուռի պատին կից, մի ուրիշ խորան կա նվիրված Լուսավորչին: Այսպիսի հինգ խորաններ էլ կան ժամատան մեջ, չհաշված մատուռների խորանները:
Տաճարի լայնության կենտրոնում գտնվում է Ավագ սեղանը՝ քառակուսի և վայելուչ բեմով, որը տաճարը բաժանում է երկու մասի: Մի կողմում ս. Կարապետի, իսկ մյուս կողմում ս. Գևորգի խորաններն են: Ավագ սեղանի աջակողմյան մասը զարդարված է մարմարյա խաչքարերով, որոնց վրա արձանագրություններ կան: Ավագ սեղանի վրա բարձրանում է նաև մի ոսկեզօծ գեղաքանդակ խաչկալ, որի վրա դրված է ս. Աստվածածնի պատկերը՝ շրջապատված հրեշտակներով:
Գեղեցիկ է ս. Կարապետի զանգակատունը: Նա գմբեթավոր է, և հենված է ութ սյուների վրա: Զանգակատունը մի սեղան ունի ս. Հոգու անունով:
Ս. Կարապետի ժամատան սալահատակում զետեղված են վեմեր, որոնք ծածկում են հայ պատմագիրների հիշատակած իշխանների և ռազմիկների գերեզմանները: Սասանյանների դեմ մղված արյունահեղ պատերազմներն ենք ակամայից հիշում, գրում է Լինչը, տեսնելով, Մուշեղի, Գայլ Վահանի և Սմբատի գերեզմանները:
Ս. Կարապետի վկայարանը բոլորից հին շենքն է համարվում: Նրա երկարությունը տասը մետր է, լայնությունը վեց մետր, բարձրությունը տասնհինգ մետր: Ս. Կարապետի վկայարանը կառուցված է առանց սյուների: Չորս կողմը ձգված են կամարներ: Խորանի աջ կողմում գտնվում է վեցից յոթ մետր բարձրությամբ խաչքար, որը պատկերների, դրվագների, քանդակների նրբությամբ իր տեսակի մեջ սքանչելի է: Բեմի ներքևը զարդարված է մարմարյա խաչքարերով, թվով հինգ հատ, որոնց վրա կան արձանագրություններ:
Ս. Կարապետի շուրջը կան նաև այլ սրբավայրեր: Գերեզմանատան հարավային մասում է գտնվում ս. Գևորգ տաճարը, որը նույնպես առանց սյուների է կառուցված: 1866 թվականի երկրաշարժի ժամանակ ճեղքվել էին նրա կամարները: Այս տաճարը օգտագործվել է որպես մատենադարան և մատյանների պահեստ: Միևնույն ժամանակ այստեղ պահվել են եկեղեցական մյուս կարևոր իրերը, սպասքներն ու անոթները, որոնցով հարուստ է եղել ս. Կարապետի վանքը:

Գերեզմանատան աջակողմում է գտնվում ս. Ստեփանոսի տաճարը, որը նման է ս. Կարապետի վկայարանին, սակայն ավելի ընդարձակ է, լուսավոր և գեղեցիկ:
Ս. Աստվածածնա վկայարանը նույնպես կառուցված է առանց սյուների, հատակը չի սալարկված: Ունի երկու խաչկալներ: Ս. Աստվածածնա վկայարանը Հովհաննու Կարապետի տոնին տրամադրվում էր ասորի հոգևորականներին, որոնք գալիս մասնակցում էին տոնակատարությանը:
Տաճարի ետևում Խաչբակն է, որտեղ թաղված են վանահայրեր, վարդապետներ: Իսկ հյուսիսային և արևմտյան կողմերում երկհարկանի խուցեր են, որոնք ուխտավորների և վանքի պաշտպանության համար են եղել: Սրանց միջև կառուցվել է վարժարանը և աշակերտների ննջասենյակները: Հարավ-արևմտյան բակում գտնվում է ս. Հարություն մատուռը, որը շրջապատված է քարե պարսպով: Ըստ ավանդության այստեղ է եղել «դևերի կայանը», որը կործանել է Լուսավորիչը: Ժողովուրդը այն անվանել է «Դժոխքի դուռ»: Եվ երբ Լուսավորիչը կործանել է նրանց մեհյանը, ապա դևերին շղթայակապ իջեցրել է անդունդի մեջ: Տարոնի աշուղները երգում են.

«Լուսավորիչը ժողվեց դիվան՝ լցեց զնդան.
Կաղ դեն եկավ ասաց. «Յաման,
Չիս մի դներ զնդան:
Ես կեղիմ սուրբ Կարապետու փոշեհան...»:

1883 թվականին ս. Կարապետի վանքում լույս է տեսնում «Արծիվ Տարոնո» հանդեսը, որի անվանաթերթի վրա գրված էր.
Լրատար
ԱՐԾԻՎ ՏԱՐՈՆՈ
Թռացեալ թևոք Վասպուրական Արծվույն
ի Մամիկոնյան աշխարհեն Յիննակնեան լերանց
ի Մշո ս. Կարապետի հրաշալի ուխտեն:
Մուշ (Տարոն) 1863– 1865
ԽՄԲԱԳԻՐ՝ ԳԱՐԵԳԻՆ ՍՐՎԱՆՁՏՅԱՆ
Տպարան «Վասպ. Արծվույն»
«Արծիվ Տարոնո» հանդեսը լույս է տեսնում երեք տարի՝ 1863 թվականի ապրիլի 1–ից մինչև 1865 թվականի հունիսի 1-ը, ընդամենը 43 համար:

ԱՌԱՔԵԼՈՑ ՎԱՆՔԻ ԴՈՒՌԸ

Մշո Առաքելոց վանքի մայր եկեղեցու երկփեղկյա քանդակազարդ ընկուզենու փայտից պատրաստված դուռը մեծ արժեք է ներկայացնում և ունի պատմական նշանակություն: Սակայն

նախքան դռան մասին խոսելը, ասենք թե ինչպես է այն հասել Հայաստանի պետական պատմական թանգարան:
Առաքելոց վանքի ամենից ավելի ակնառու և արժեքավոր, հնությունը կազմել է այն դուռը, որի մասին լսել ու մոտիկից ծանոթ են եղել գերմանացի հնագետները, որոնք 1915 թվականին հայկական տեղահանությունների ժամանակ, օգտվելով առիթից, թուրք կառավարության թույլտվությամբ, գնացել են Առաքելոց վանք, պոկել դուռը և տեղափոխել Բիթլիս, այնտեղից էլ հարմար առիթով Բեռլինի Կայսերական թանգարան փոխադրելու համար: Սակայն ռուսական բանակի հաղթական առաջխաղացումը խանգարում է նրանց: Ռուսական բանակը գրավում է Բիթլիս քաղաքը: Նահանջող գերմանացիների լքած ավարի շարքում ձեռք է բերվում նաև այս պատմական դուռը: Ռուսական բանակում կռվող հայ զինվորները այս արժեքավոր հնությունը հանձնում են Կովկաս գաղթող հայ գաղթականներին, որոնք որպես անցյալ դարերի մշակութային արժեքներից փրկված մի նշխար, մեծ զգուշությամբ հասցնում են Կովկաս և ժամանակավորապես պահ տալիս Թիֆլիսի թանգարանին, որը այն հանձնում է Հայաստանի նորաստեղծ պետական թանգարանին:
Առաքելոց վանքի դուռը ունի ավելի քան ութ հարյուր տարվա պատմություն: Հուշարձանը կառուցվել է 12-րդ դարի երկրորդ քառորդի սկզբներին և վկայում է իր ստեղծման ժամանակաշրջանի հայկական մշակույթի բարձր մակարդակի մասին:
Առաքելոց վանքի դուռը երկփեղկանի է. վերևի մասում քանդակված են թվականը և քանդակող վարպետների անունները՝ «Ի թ. Հ. ՇՁԳ. ԵՍ ՏՐ Թորոս եւ Գրիգոր եւ Ղուկաս ԳԾ.», որը կարդացվում է «Ի թվականի հայոց ՇՁԳ (1134) ես տեր Թորոս և Գրիգոր և Ղուկաս գծեցաք»:
Ենթադրվում է, որ նշված առաջին անձը հոգևորական է, հավանաբար դռան մեկենասը, իսկ Գրիգորն ու Ղուկասը քանդակագործ վարպետներն են:
Հետաքրքրականն այն է, որ վանական մի այդպիսի սրբավայրի դուռ կրոնական խորհրդանշաններով չի հորինված: Վրան ավելի շատ աշխարհիկ կյանքի պատկերներ են, առավելապես պատմական անցյալը պատկերող դրվագներ: Դռան շրջանակը բաղկացած է կողերի երկու և վերի միացնող մասերից: Ամենից արտահայտիչը դրասանդն է, որը բաղկացած է երկու մասից: Աջակողմյան քանդակը ներկայացնում է երկու ձիավորներ դեմդիմաց, իսկ աջ կողմինը տեգով զգետնել է մի հսկա վիշապ: Դիմացի ձիավորը հավանաբար իշխան է, քանի որ աջ ձեռքում բռնած ունի իշխանական գավազան, իսկ ձախ թևը

պաշտպանված է քանդակազարդ վահանով: Երկուսի վերևում փորագրված է դժվար ընթեռնելի մի արձանագրություն, որը կարելի է կարդալ ԱԲԳՈՐԳ:

Իսկ ձախակողմյան մասում կան երեք անձնավորություններ, որոնցից երկարազգեստը շեփորողն է: Նրա առջևից երկու զրահազգեստ զինվորները արշավում են: Նրանցից մեկը սուրը մեկնել է դեպի առջևի լախտակիր ձիավորը, որը արքայական տարազով է: Բայց նա ավելի շուտ փախչողի է նման, քանի որ ձախ ձեռքը կախ է ընկած կողքից: Իսկ այս երկու ձիավորների միջև փորագրված է ՏՐԴԱՏ: Պատմաբաններից ոմանք դռան ճակատազարդի այդ պատկերի մեջ տեսնում են «Սասունցի Դավիթ» էպոսի դրվագներից մեկը Դավիթը իր թուր-կայծակին մերկացրած՝ հալածում է Մսրա Մելիքին: Սակայն այս դեպքում ինչպես բացատրել «Տրդատ» գրությունը: Գուցե այդ անձնավորությունը հայոց առաջին թագավոր Տրդատն է: Սակայն այդ դեպքում ինչու է նա ներկայացված փախչողի, հալածվողի դերում: Անհիմն չէ ուրեմն նրանց մեջ տեսնել «Սասունցի Դավիթ» էպոսի դրվագներից մեկը, մանավանդ որ դռան վրա քանդակված գազաններն ու ընտանի կենդանիները հիշատակված են էպոսում: Ինչ վերաբերում է փորագրված «ՏՐԴԱՏ» և «ՍԲԳՈՐԳ» անուններին, ապա որոշ հնագետ պատմաբանների կարծիքով դրանք հետագայում են ավելացվել, քանի որ ընդհանուր հորինվածքի հետ չեն ներդաշնակում:

Մշո Առաքելոց վանքի դուռը հայ միջնադարյան զարդաքանդակային արվեստի թանկագին նշխարներից մեկն է, որը փրկել է ժողովուրդը:

Մի շարք գիտնական ճարտարապետներ այս դռան հորինվածքի վրա արաբական արվեստի ազդեցություն են տեսել:

Սակայն իրականում արաբները պատմության թատերաբեմ դուրս գալուց դեռ շատ առաջ Հայաստանում քանդակագործության արվեստը արդեն կատարելության էր հասել: Այժմ անցնենք վանքի նկարագրությանը:

ԱՌԱՔԵԼՈՑ ՎԱՆՔԸ

Առաքելոց վանքը գտնվում է Մուշ քաղաքից մոտ տասը կիլոմետր հեռավորության վրա, հարավ-արևելք, Տավրոսի շղթայի երկու կատարների միջև ընկած, Տիրնկատար կամ Ծիրնկատար կոչվող լեռան լանջին՝ մի գեղատեսիլ վայրում: Վանքը ամբողջությամբ պատրաստվել է սրբատաշ քարերից:

Մուշի մյուս վանքերի նման Առաքելոց վանքը ևս հայտնի է եղել մի քանի անունով. ընդհանրապես կոչվել է Առաքելոց վանք: Սակայն համանուն մյուս վանքերից տարբերելու համար անվանվել է Մուշի Առաքյալք կամ Երկոտասան վանք: Այսինքն տասներկու առաքելոց վանք:

Ըստ ավանդության, երբ 312 թվականին Գրիգոր Լուսավորիչը հիմնել է վանքը, այդտեղ է տեղավորել տասներկու առաքյալներից մի քանիսի մասունքները: Եվ ի հիշատակ առաքյալների, կոչվել է Տասներկու առաքելոց վանք:
Անվանվել է նաև թարգմանչաց վանք, որովհետև այնտեղ են գտնվում մի շարք թարգմանիչ վարդապետների գերեզմանները:
Կոչվել է նաև Ղազարու, երբեմն էլ Եղիազարու վանք, ըստ ավանդության վանքի առաջին վանահայրը եղել է Եղիազար անունով մի հոգևորական: Հետագայում Եղիազար անունը ժողովրդի կողմից ձևափոխվել է և դարձել Ղազար, իսկ վանքը՝ Ղազարու վանք:
Քանի որ վանքը գտնվում է Տիրնկատար սարի ստորոտին, ստացել է նաև Արեգնածագ Տիրնկատար վանք անունը:
Վանքի աջակողմում գտնվող անդնդախոր ձորի պատճառով կոչվել է նաև Գլաձորի վանք:
Իսկ Առաքելոց վանքի մոտակայքում գտնվող ս. Թադեի մատուռի պատճառով ստացել է նաև ս. Թադեի վանք անունը:
Ինչպես ասվեց, Առաքելոց վանքը գտնվում է Տիրնկատար լեռան ստորոտին: Այն ըստ ավանդության, 312 թվականին կառուցել է Լուսավորիչը: Վանքի շինարարությունը ամբողջությամբ ավարտվել է Սասունցի Թոռնիկյան իշխանության օրոք: Հետագայում Առաքելոց վանքը դառնում է Հայաստանի նշանավոր կրթական կենտրոններից մեկը: Դարերի ընթացքում զարգացել է և համալրվել նոր շինություններով:
Վանքը շրջապատված է բերդանման պարիսպներով և ունի երկաթյա դռներ: Դռնից ներս մտնողի առաջ է կանգնում տաճարը: Մի նեղ դռնով կարելի է մտնել սալահատակված գավիթը, որի վրա է բարձրանում սյունազարդ և ճաշակավոր զանգակատունը: Ներկա զանգակատունը իր կառուցվածքով ցույց է տալիս, որ այն հին գործ չէ: Զանգակատան արձանագրություններից տեղեկանում ենք, որ կառուցվել է 1791 թվականին «Ձեռամբ ձայնեղ դիդին Տեր Օհաննես վարդապետի»: Սակայն չպետք է կարծել, որ նախկինում Առաքելոց վանքը չի ունեցել զանգակատուն: Հավանաբար այն կործանվել է և դրա փոխարեն նորն են կառուցել:
Երկու աստիճան իջնելով, գավիթից մտնում ենք ժամատուն, որը կանգնած է չորս քառակուսի սյուների վրա, կամարակապ է ու ընդարձակ: Սակայն բարձր չի և չունի հարմար լուսամուտներ, որի պատճառով էլ ժամատան ներսը խավար է: Նրա աջակողմյան բարձր սյան վրա գրված է «Ի թուին հայոց ՌԴ շինեուցավ ժամատունս ի ձեռամբ Տեր Կարապետ Արքեպիսկոպոսին յիշատակ իւր և ծնողաց իւրոց»: Հետևաբար կարող ենք ասել, որ ժամատունը կառուցվել է 1555 թվականին

Կարապետ Արքեպիսկոպոսի ձեռքով, որը հավանաբար եղել է Առաքելոց վանքի վանահայրերից մեկը:
Եկեղեցու աջ և ձախ կողմերում կան մատուռներ: Դուրս գալով վանքի հարավային դռնից մտնում ենք թարգմանիչների գերեզմանատունը, ուր, պարիսպների տակ, կան մեծամեծ խաչաթոռներ: Խաչաթոռներից յարաքանչյուրի վրա արձանագրություններ կան: Այստեղ է գտնվում Դավիթ Անհաղթ փիլիսոփայի խաչաթոռը, որը, ինչպես արձանագրությունից է երևում, կանգնեցվել է նրա մահից շատ հետո: Խաչաթոռների դիմաց կան երկու գերեզմաններ, որոնք ըստ ավանդության պատկանում են պատմահայր Խորենացուն և Մամբրե Վերծանողին: Սրանցից մի քիչ հեռու, նորից իրար մոտ, գտնվում են երկու ուրիշ գերեզմաններ, դրանք, ասում են, Համազասպ և Սահակ Արծրունի իշխանների գերեզմաններն են:
Վանքի բակում գտնվում են միաբանների սենյակներ, որոնք պատրաստվել են սև և կլոր քարերից: Այդ սենյակները և հարակից շենքերի մի մասը հատկացված են եղել վարժարանին, որբանոցին և արհեստանոցին:
Մենաստանից դուրս կանգնեցված է մի փոքրիկ և գեղեցիկ մատուռ նվիրված ս. Աստվածածնին:
Առաքելոց վանքի դիմաց դաշտի միջով հոսում է Մեղրագետը: Ամեն տարի Վարդավառի նախօրեին ժողովուրդը հավաքվում էր այս գետի զույգ ափերին տոնախմբության: Վարդավառի օրը, առավոտյան արևածագին, նրանք սկսում էին միմյանց վրա ջուր ցանել: Այս սովորությունը պահպանվել է և տոնվել մինչև Տարոնի հայաթափ լինելը:
Մինչև 1915 թվականը Մշո Առաքելոց վանքում էր գտնվում «Մշո ճառընտիրը», այսինքն՝ զանազան բովանդակությամբ ընտիր ճառերի և հոդվածների ժողովածուն: Դա հայ գրչության արվեստի ամենախոշոր հուշարձաններից մեկն է, որը աչքի է ընկնում իր հարուստ և ինքնատիպ մանրանկարչությամբ: «Մշո ճառընտիրը» այժմ գտնվում է մեր Մատենադարանում: